ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԾԵԾԻ ՄԻՋԱԴԵՊԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՐԿՈՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ԱԶԱՏՎԵԼ ԵՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԻՑ

21.02.2023 16:20

Փաստաբանների ծեծի միջադեպի կապակցությամբ Ներքին գործերի նախարարությունը տեղեկացրել է, որ միջադեպին մասնակցած Էրեբունու բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազորներ Մարտուն Եղիազարյանը և Վահե Պապոյանը ներկայումս ազատվել են զբաղեցրած պաշտոններից:

Փաստաբանների պալատը ողջունում է Ներքին գործերի նախարարության կողմից ձեռնարկված միջոցները, որոնք ուղղված են ոստիկանական բաժանմունքում տեղի ունեցած միջադեպի օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովմանը:

Փաստաբանը պետք է պաշտպանված լինի ցանկացած միջավայրում, առավել ևս ոստիկանության բաժիններում:

Սույն գործի ընթացքը կշարունակի լինել Փաստաբանների պալատի ուշադրության կենտրոնում:

ԲԵՌՆԵԼ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })